ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան “ 27 ” հուլիսի_2011 թ.

ՀՐԱՄԱՆ № 24 Ա/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՄԱՏԵՂ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ

«ԳՊԿ- ՌՀԳՀ-2012» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի (ԳՊԿ) և Ռուսաստանյան հումանիտար գիտական հիմնադրամի (ՌՀԳՀ) միջև 2011 թվականի փետրվարի 18-ին կնքված «Համագործակցության մասին» համաձայնագիրը, գիտական ծրագրերի աջակցության ֆինանսավորման շրջանակներում անցկացվող «ԳՊԿ-ՌՀԳՀ-2012 » մրցույթը պատշաճ կազմակերպելու համար

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին (պետ Գ. Մելիքսեթյան)՝ օգոստոսի 1-ին ապահովել մրցույթի հայտարարության և հրավերի փաթեթի տեղադրումը ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի ինտերնետային կայք:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական

հաշվառման բաժնին (պետ Տ. Գալստյան)՝ ապահովել հայտերի գիտական փորձաքննությունն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանված կարգով տրամադրումը:

3. ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչությանը (պետի ժ.պ. Գ. Տոնյան)՝

1) մինչև սեպտեմբերի 30-ը ապահովել մրցույթի հայտերի ընդունումը և հաշվառումը,
2) մրցույթի հայտ ներկայացրած գիտահետազոտական խմբերի ղեկավարների համար իրականացնել տեղեկատվական խորհրդատվություն,
3) մինչև հոկտեմբերի 31-ը կազմակերպել հայտերի տեխնիկական ստուգումը և դրանց տրամադրումը փորձագիտական մասնագիտական խորհրդին,
4) մինչև դեկտեմբերի 30-ը ապահովել մրցույթի հայտերի գիտական փորձաքննության կազմակերպումը,
5) մինչև 2012 թ. հունվարի 30-ը ամփոփել գիտական փորձաքննության արդյունքները, դրանք ներկայացնել փորձագիտական մասնագիտական խորհրդին,
6) մինչև փետրվարի 15-ը մրցույթի արդյունքների վերաբերյալ սահմանված կարգով տեղեկացնել գիտական թեմաների ղեկավարներին,
7) մինչև 2012 թ. մարտի 1-ը կազմակերպել գիտական թեմաների ղեկավարների հետ ֆինանսավորման պայմանագրերի կնքումը:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ